

**1.2.4. Շինարարություն**

**Բնակարանային շինարարություն:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում մարդասիրական օգնության և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 25995 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 59 բնակելի շենք կամ 2002թ. հունվար-ապրիլին գործարկված մակերեսի 144.2%-ը: Մասնավորապես.

♦ **այլ մարդասիրական օգնության միջոցների** հաշվին՝ 7320 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 8 բնակելի շենք, որոնցից, համապատասխանաբար, ք. Գյումրիում 4737 քառ. մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 2 ամրացված բնակելի շենք և Սպիտակի տարածաշրջանում 2583 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 6 նոր բնակելի շենք,

♦ **բնակչության միջոցների** հաշվին՝ 18675 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 51 նոր բնակելի շենք, որոնցից, համապատասխանաբար, Աշտարակի տարածաշրջանում՝ 860 և 3, Արարատի՝ 120 և 1, Արտաշատի՝ 300 և 1, Մասիսի՝ 560 և 5, Վաղարշապատի՝ 1460 և 6, Գուգարքի՝ 100 և 1, Կոտայքի՝ 890 և 6, Արթիկի՝ 240 և 2, Նոյեմբերյանի տարածաշրջանում՝ 170 և 2, ք. Վանաձորում՝ 742 և 5, ք. Գյումրիում՝ 233 և 1, և ք. Երևանում՝ 13000 քառ.մ և 18 բնակելի շենք:

**Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը**

	2002			2003		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	% նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	% նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2989	78.0	5.6	2374	79.4	3.3
Փետրվար	4046	33.5	135.4	7087	175.2	3անգամ
Մարտ	6372	34.9	157.5	12308	193.2	173.7
<b>/ եռամսյակ</b>	<b>13407</b>	<b>39.3</b>	<b>x</b>	<b>21769</b>	<b>162.4</b>	<b>x</b>
Ապրիլ	4624	67.0	72.6	4226	91.4	34.3

2003թ. ապրիլին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսի 89.2%-ը շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2002թ.՝ 100%):

**Հանրակրթական դպրոցների շինարարություն:** 2003թ. հունվար-ապրիլին *Համաշխարհային բանկի վարկի* հաշվին շահագործման է հանձնվել 847 աշակերտական տեղով 5 նոր հանրակրթական դպրոց: Մասնավորապես. Անիի տարածաշրջանում, համապատասխանաբար՝ 167 և 1, Նոյեմբերյանի՝ 100 և 1, ճամբարակի՝ 30 և 1, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 200 և 1 , ք. Գյումրիում՝ 350 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում իրականացվել է 22964.4 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 10898.9մլն. դրամի, իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 18441.1 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 7112.3 մլն. դրամ:

**Իրականացված կապիտալ շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2003թ. հունվար-ապրիլին**

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն. դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շին-նոնտատա-յին աշխատանքներ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %		Ընդհանուրի նկատմամբ, %	
			իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շիննոնտատա-յին աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շիննոնտատա-յին աշխատանքներ
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>22964.4</b>	<b>18441.1</b>	<b>140.9</b>	<b>142.8</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>						
պետական բյուջեի	1760.3	1685.0	104.2	107.5	7.6	9.1
սեփականաշնորհումից ստացված միջոցների	17.7	14.7	4.4	4.2	0.1	0.1
համայնքների միջոցների	37.8	37.8	107.8	107.8	0.2	0.2
Համաշխարհային բանկի վարկի	1306.1	1020.9	111.4	142.4	5.7	5.5
մարդասիրական օգնության միջոցների	8043.1	7757.2	2.4անգամ	2.4անգամ	35.0	42.1
<i>դրանից.</i>						
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	157.2	157.2	166.0	165.7	0.7	0.9
ՄԱԿ-ի միջոցների	140.6	140.6	210.4	210.1	0.6	0.8
հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	230.8	230.8	96.1	98.2	1.0	1.2
այլ մարդասիրական օգնության միջոցների	7514.5	7228.6	2.5անգամ	2.6անգամ	32.7	39.2
կազմակերպությունների միջոցների	5575.9	2256.1	126.0	74.7	24.3	12.2
բնակչության միջոցների	6223.5	5669.4	124.1	143.8	27.1	30.8

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալի աճի տեմպերը**

	2002			2003		
	իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն. դրամ (ընթացիկ գներով)	%, համադրելի գներով		իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն. դրամ (ընթացիկ գներով)	%, համադրելի գներով	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	1897.5	104.6	11.8	2972.7	156.2	9.4
Փետրվար	3904.7	116.7	206.2	5090.4	129.3	170.7
Մարտ	4585.1	111.0	117.4	5851.8	126.6	115.0
<b>1 եռամսյակ</b>	<b>10387.3</b>	<b>111.8</b>	<b>x</b>	<b>13914.9</b>	<b>133.2</b>	<b>x</b>
Ապրիլ	5781.3	127.5	126.6	9049.5	154.7	154.6

2003թ. ապրիլին իրականացված 9049.5 մլն. դրամի կապիտալ շինարարությունը 2002թ. ապրիլի համեմատությամբ աճել է 54.7%-ով, իսկ 2003թ. հունվար-ապրիլին իրականացված 22964.4 մլն. դրամի կապիտալ շինարարությունը 2002թ. հունվար-ապրիլի համեմատությամբ՝ 40.9 % -ով:

**Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի, 2003թ. հունվար-ապրիլին**

*(ընթացիկ գներով, մլն. դրամ)*

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	կապիտալ շինարարություն	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը ԳԳ</b>	<b>22964.4</b>	<b>18441.1</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում:</i>				
արդյունաբերություն	737.5	461.0	3.2	2.5
գյուղատնտեսություն	1716.1	1348.2	7.5	7.3
տրանսպորտ և կապ	8246.8	5250.9	35.9	28.5
առևտուր	1320.8	1104.0	5.8	6.0
բնակարանային տնտեսություն	7580.6	7455.0	33.0	40.4
կոմունալ տնտեսություն	220.5	211.4	1.0	1.1
առողջապահություն	8.9	8.9	0.0	0.1
կրթություն	409.4	407.7	1.8	2.2
մշակույթ	49.7	49.7	0.2	0.3
տնտեսության այլ ճյուղեր	2674.1	2144.3	11.6	11.6

**Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում *Հանաշխարհային բանկի միջոցների* հաշվին վերանորոգվել է 460 աշակերտական տեղով 2 հանրակրթական դպրոց, որից ք.Վանաձորում 190 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց, Արթիկի տարածաշրջանում՝ 270 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

**Շինարարությունն աղետի գոտում**

**Բնակարանային շինարարություն:** 2003թ. հունվար-ապրիլին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում մարդասիրական օգնության և բնակչության, միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 8805 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 19 բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 33.9%-ը:

**Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերն աղետի գոտում**

	2002			2003		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	569	224.0	2.1	354	62.2	0.9
Փետրվար	1158	21.7	203.5	5007	4.3անգամ	14.1անգամ
Մարտ	1896	13.3	163.7	2988	157.6	59.7
<b>Ընդամենը</b>	<b>3623</b>	<b>18.2</b>	<b>x</b>	<b>8349</b>	<b>230.4</b>	<b>x</b>
Ապրիլին	774	212.1	40.8	456	58.9	15.3

2003թ. ապրիլին բնակչության միջոցների հաշվին բնակելի շենքեր շահագործման չեն հանձնվել (2002թ.՝ 100%):

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:** Հանրապետության աղետի գոտում 2003թ. հունվար-ապրիլին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 5963.0 մլն.դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ծավալի 26%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 1485.7 մլն. դրամ (13.6%):

**ՀՀ աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2003թ. հունվար-ապրիլին**

(ընթացիկ գներով, մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>5963.0</b>	<b>5850.3</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում ի հաշիվ.</i>				
պետական բյուջեի	522.3	522.3	8.8	8.9
սեփականաշնորհումից ստացված միջոցների	17.7	14.7	0.3	0.3
համայնքերի միջոցների	20.2	20.2	0.3	0.3
Համաշխարհային բանկի վարկի	569.5	569.5	9.5	9.7
մարդասիրական օգնության միջոցների <i>դրամից.</i>	4535.1	4451.5	76.1	76.1
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	157.2	157.2	2.7	2.7
հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	30.1	30.1	0.5	0.5
այլ մարդասիրական օգնության միջոցների	4347.8	4264.2	72.9	72.9
կազմակերպությունների միջոցների	66.0	39.9	1.1	0.7
բնակչության միջոցների	232.2	232.2	3.9	4.0